

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

28.03.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
Ա.Բեջանյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը,
Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ա.Աղլոյանը, Ս.Ղուբաթյանը,
Հ.Հակոբյանը, Ն.Համբարձումյանը, Հ.Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ
պաշտոնատար անձինք
Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
Լ.Տեր-Սիմոնյանը -մարզպետի խորհրդական
Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական
Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական

Օրակարգում`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Ջեյ. գլխավոր քարտուղարի տեղակալ,
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում
կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր վ ե ց

1. **ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Խաչատրյանին`**

Անհրաժեշտ հսկողություն սահմանել աշխատակիցների կողմից աշխատանքային կարգապահության կանոնների պահպանման նկատմամբ:

2. **ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օհանյանին`**

Միջոցներ ձեռնարկել մարզի տարածքներում աղբավայրերի վերաբերյալ քարտեզներ կազմելու և աղբահանության գործընթացները վերահսկելու նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին, աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Համատեղ աշխատանքներ իրականացնել մարզում նախատեսված և արդեն հաստատված սուբվենցիոն ծրագրերի իրականացման ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ մարզում իրականացվող հրատապ ծրագրերի վերաբերյալ և վերահսկել ընթացքը:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին՝

Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ Վանաձորի բժշկական կենտրոնի գույքի տիրապետման և պահպանման վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների վերաբերյալ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

ա) Ներկայացնել ամբողջական տեղեկատվություն մարզի համայնքների աշխատակազմերի արձակուրդների տրամադրման վերաբերյալ և վերահսկել գործընթացը.

բ) Դիմել Վանաձոր և Տաշիր համայնքների ղեկավարներին իրենց կողմից հեռարձակվող օնլայն նիստերի որակի բարելավման աշխատանքներ իրականացնելու առաջարկությամբ:

8. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օհանյանին՝

ա) Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Ազնվածոր և Արդվի համայնքներում նախատեսվող հողաշինարարական գործերի ընթացքի վերաբերյալ:

բ) Մինչև 05.04.2019թ. ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ԱԳԼԾԿ-ներում իրականացվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

9. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ.Հակոբյանին՝

Մարզպետարանի կայքէջով և այլ միջոցներով իրազեկել հանրությանը մարզում իրականացվող հողամասերի աճուրդների և մրցույթների անցկացման մասին հայտարարություններ տեղադրելու վերաբերյալ:

29/03/2019



ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ԴՈՒԿԱՍՅԱՆ